Հասմիկ Մ. Մելիքսեթյան[1]

ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ[2]

Անկախ Վրաստանի պատմության մեջ առաջին անգամ երկրում անցկացվել են խորհրդարանական ընտրություններ՝ Արևմուտքի կամ արևմտյան գործընկերներից մեծ մասի հետ բացահայտ հակասությունների, լարվածության համատեքստում: Իշխող «Վրացական երազանք» կուսակցությունը մինչև բուն նախընտրական շրջանը խորհրդարանում ընդունել էր «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրինագիծը[3], ինչպես նաև «Ընտանեկան արժեքների և անչափահասների պաշտպանության մասին»[4] օրենսդրական փաթեթը: «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրինագծով բոլոր այն կազմակերպությունները, որոնց ֆինանսավորման 20%-ից ավելին տրամադրվում է արտերկրից, պարտավորվում են գրանցվել հատուկ կայքում: Հակառակ դեպքում, կազմակերպությունը հսկայական տուգանքների է ենթարկվում:

Իշխող կուսակցությունը խորհրդարանական ընտրություններից առաջ այս քայլով փորձեց ինչ-որ առումներով վերահսկելի դարձնել ընդդիմադիր դաշտի ֆինանսական հոսքերը: Օրինագծի ընդունմանը հաջորդեցին Արևմտյան գործընկերների խիստ հայտարարություններն ու քայլերը, ընդհուպ՝ ԱՄՆ-ի կողմից Վրաստանին տրամադրվող ամենամյա ֆինանսական օժանդակության (ավելի քան 95 մլն ԱՄՆ դոլար) կասեցումը: ԱՄՆ-ի պետքարտուղարությունից 2024 թ. հուլիսին հայտարարել էին, որ Վրաստանի

---

[1] Լրագրող, կովկասագետ, Վրաստանի հարցերով փորձագետ: 2010–2014 թթ. սովորել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում, 2014–2016 թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի, Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի «Կովկասագիտություն» մագիստրոսական ծրագրում, 2016–2018 թթ. կրթությունը շարունակել է Թբիլիսիի պետական համալսարանի հասարակական և քաղաքական գիտությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների բաժնի «Եվրասիական և Կովկասյան ուսումնասիրություններ» անգլալեզու մագիստրոսական ծրագրում՝ «Տարածաշրջանային հետազոտություններ», «Եվրասիական և Կովկասյան ուսումնասիրություններ» մասնագիտացմամբ: 2013 թ.-ից աշխատել է www.razm.info մասնագիտացված կայքում՝ որպես լրագրող-վերլուծաբան, այնուհետև՝ «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ում: Վրաստանի եվրոատլանտյան ինտեգրացիայի, ադրբեջանական քարոզչության վերաբերյալ գիտական հոդվածների հեղինակ է:

[2] Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 11.11.2024 թ.:

[3] უცხოური გავლენის გამჭვირვალობის შესახებ, 28.05.2024, https://matsne.gov.ge/ka/document/view/6171895?publication=0 (բեռնման օրը՝ 11.11.2024).

[4] Օրենքի փաթեթն Արևմուտքում համարում են ԼԳԲՏ անձանց իրավունքների դեմ փաստաթուղթ: Փաթեթով ևս մեկ անգամ սահմանվում է, որ ամուսնությունը տղամարդու և կնոջ միությունն է: Նշվում է, որ անչափահասին չի կարող որդեգրել միայնակ կամ ոչ հետերոսեքսուալ անձ, չի կարող երկրում իրականացվել սեռը փոխելու վիրահատություն, փաստաթղթերում արգելվում է նշել անձի սեռից բացի այլ սեռ, ինչպես նաև արգելվում է անձի սեռի պատկանելության, միևնույն սեռերի միջև հարաբերություններին նպաստելուն ուղղված հանրային հավաքներ կամ ցույցեր:

կառավարության քայլերը հակաժողովրդավարական են ու անհամատեղելի ԵՄ և ՆԱՏՕ-ին անդամակցելու չափանիշներին: ԱՄՆ-ի արտաքին քաղաքական գերատեսչությունից նաև հիշեցրել էին, որ վերջին 32 տարվա ընթացքում Վրաստանին հատկացվել է ավելի քան 6,2 մլրդ ԱՄՆ դոլար[5]:

Եվրոպական Միությունն էլ իր հերթին հայտարարել էր, որ Վրաստանի ԵՄ անդամակցության թեկնածուի գործընթացը ժամանակավորապես կասեցվել է[6]: Այդ կարգավիճակը Վրաստանը ստացել էր 2023-ի դեկտեմբերին: Եվրոպան նույնպես ժամանակավորապես դադարեցրել է ֆինանսական աջակցությունը: Նշվում է, որ ժողովրդավարության հետընթացի պատճառով Վրաստանը կկորցնի ԵՄ օգնության 121,3 մլն եվրո[7]: Խոսքը 2022–2024 թթ. հատկացված գումարների մասին է:

Խորհրդարանական ընտրությունների արդյունքներն ու ընդդիմության՝ առանց հստակության գործողությունները

Վրաստանում 2024 թ. հոկտեմբերի 26-ին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքներով իշխող «Վրացական երազանք» կուսակցությունն ստացել է ձայների մեծամասնությունը՝ 53,93% (89 մանդատ): Այս կուսակցությունը երկիրը ղեկավարում է մեկ տասնյակից ավելի ու, հավանաբար, կշարունակի ևս 4 տարի:

Խորհրդարան են անցել ընդդիմադիր այն ուժերը, որոնց մեջ ընթանում էր նախընտրական պայքարը՝ «Հանուն փոփոխությունների կոալիցիա»՝ 11,04% (19 մանդատ), «Միասնություն–ազգային շարժում»՝ 10,16% (16 մանդատ), «Ուժեղ Վրաստան»՝ 8,81% (14 մանդատ), «Գախարիան՝ հանուն Վրաստանի»՝ 7,77% (12 մանդատ): **Ընդդիմադիր ուժերը, սակայն, չեն ընդունում ընտրության արդյունքները:** Երկրի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլիի հետ խորհրդակցություններից հետո դրանք հայտարարել են[8], որ չեն ընդունում ընտրությունների արդյունքները և կոչ են արել հասարակությանը դուրս գալ պայքարի: Ավելի վաղ փողոց դուրս գալու կարևորության մասին էր հայտարարել[9] նաև Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլին: Ընդդիմությունը հետընտրական հանրահավաքն արել է հոկտեմբերի 28-ին, որտեղ այդ

[5] United States to Pause Assistance to the Government of Georgia, 31.07.2024, https://www.state.gov/united-states-to-pause-assistance-to-the-government-of-georgia/ (բեռնման օրը՝ 11.11.2024).

[6] EU says Georgia's membership path on hold over NGO law, 28.06.2024, https://www.bbc.com/news/articles/ cql82we090vo (բեռնման օրը՝ 11.11.2024).

[7] EU Neighbourhood & Enlargement, 08.10.2024, https://x.com/eu_near/status/1843622577115410463, (բեռնման օրը՝ 11.11.2024).

[8] პრეზიდენტი: არ ვაღიარებ ამ არჩევნებს, 27.10.2024, https://formulanews.ge/News/119199 (բեռնման օրը՝ 11.11.2024).

[9] რა თქმა უნდა, პარლამენტში არ უნდა შევიდეს არავინ!, 27.10.2024, https://www.facebook.com/SaakashviliMikheil/posts/pfbid0gfxhWKWKz9TdbhWiPyud1ZroFNcNtRXGmmAhbUW4BAKVriUPPvdWC3BMYd6WyHtLl?rdid=7HYb40atkC6p8Zd5 (բեռնման օրը՝ 11.11.2024).

ուժերը ևս մեկ անգամ հաստատել են, որ չեն ընդունում արդյունքները, չեն պատրաստվում երկրի խորհրդարան մտնել և հրաժարվում են իրենց մանդատներից: Ընդդիմության առաջին հայտարարություններում նշվում էր, որ պահանջում են կրկնակի ընտրություններ՝ միջազգային կառույցների ներգրավմամբ:

Ընդդիմադիր ուժերի 2-րդ մեծ հանրահավաքը տեղի ունեցավ նոյեմբերի 4-ին, որտեղ էլ հանրայնացվել է ընդդիմության առաջիկա գործողությունների պլանը[10].

- *նշանակել կրկնակի ընտրություններ,*
- *չճանաչել անցած ընտրության արդյունքները և խորհրդարանի լեգիտիմությունը,*
- *սկսել դիմադրության շարժում և ընդարձակել դիմադրության ճակատը՝ Թբիլիսիում և ողջ Վրաստանում,*
- *շարունակել հավաքել ապացույցներ և փաստաթղթեր՝ հոկտեմբերի 26-ի ընտրությունների խախտումների միջազգային հետաքննության համար,*
- *պայքարը շարունակել մինչև վերջնական հաղթանակ:*

Հարկ է նշել, որ «Գախարիան՝ հանուն Վրաստանի» կուսակցության հիմնադիր, նախկին վարչապետ Գիորգի Գախարիան ընդդիմության հավաքներին չի մասնակցում որպես դերակատար: Առաջին հանրահավաքի ժամանակ եթե մյուս գործիչները նախագահի գլխավորությամբ ելույթ էին ունենում հարթակից, ապա Գախարիան ներկա էր զուտ որպես հանդիսատես: Վերջին շրջանում նկատվող պասիվության մասին խոսել են իր կուսակցության որոշ անդամներ՝ նշելով, որ Գախարիան չի կարող ամեն տեղ լինել, և որտեղ ինքը չի լինում, լինում են մյուս թիմակիցները[11]: Կուսակցության անդամներից Թեոնա Աքուբարդիան էլ հայտարարել է, թե իրենք մասնակցում են ընդդիմության ակցիաներին ոչ որպես կազմակերպիչներ, այլ՝ որպես քվեարկած քաղաքացիներ[12]: Նման քննարկումներից հետո նոյեմբերի 10-ին քաղաքացիական քայլերթներից մեկին մասնակցել է նաև Գ. Գախարիան և երիտասարդների հետ լուսանկար հրապարակել[13]:

---

[10] პროტესტი რუსთაველის გამზირზე | მთავარის საგანგებო ეთერი, 04.11.2024, https://www.facebook.com/ TvMtavari/videos/1246678829706225 (բեռնման օրը՝ 11.11.2024).

[11] Levan Gogichaishvili: I don't understand the passions, what does it matter if Gakharia goes to the opposition headquarters or not, Gakharia doesn't go, someone else goes, he can't be everywhere - as for the statements of the "dream" leaders, they are clowns and should be left alone, 08.11.2024, https://www.interpressnews.ge/en/article/134715-levan-gogichaishvili-i-dont-understand-the-passions-what-does-it-matter-if-gakharia-goes-to-the-opposition-headquarters-or-not-gakharia-doesnt-go-someone-else-goes-he-cant-be-everywhere-as-for-the-statements-of-the-dream-leaders-they-are-clowns-and-should-be-left-alone/ (բեռնման օրը՝ 11.11.2024).

[12] Teona Aqubardia: we were involved in the actions, a peaceful demonstration is the right of every citizen - we participate, although we are not the organizers, 08.11.2024, https://www.interpressnews.ge/en/article/134739-teona-aqubardia-we-were-involved-in-the-actions-a-peaceful-demonstration-is-the-right-of-every-citizen-we-participate-although-we-are-not-the-organizers/ (բեռնման օրը՝ 11.11.2024).

[13] ახალგაზრდებთან, 10.11.2024, https://www.facebook.com/photo/?fbid=1087827719467314&set=a.246154943 634600 (բեռնման օրը՝ 11.11.2024).

Ինչ վերաբերում է ընդդիմադիր մյուս ուժերին, ապա, տպավորություն է ստեղծվում, որ նախկին նախագահի հիմնադրած «Միացյալ ազգային շարժումը» Վրաստանում իր տեղը զիջել է «Հանուն փոփոխությունների կոալիցիային»: Ընտրության արդյունքներով խորհրդարանում կոալիցիան ավելի շատ մանդատ է ստացել, քան՝ ՄԱՇ-ը: Հետաքրքրական է, որ «Մթավարի արխի» ՀԸ պատվերով բրիտանական *SAVANTA* ընկերության նախընտրական հանրային հարցման ժամանակ առաջին անգամ ընդդիմադիրների առաջատարը ոչ թե Սաակաշվիլիի հիմնադրած «Միացյալ ազգային շարժում» կուսակցությունն էր, այլ՝ «Հանուն փոփոխությունների կոալիցիան», որի առաջնորդը «Մթավարի արխի» ՀԸ և «Ախալի» կուսակցության հիմնադիր Նիկա Գվարամիան էր: Գվարամիան, թեև այլևս չի ղեկավարում «Մթավարի արխին», սակայն իրեն պատկանող ՀԸ-ի 12% բաժնետոմսերը փոխանցել է կնոջը:

Ըստ հարցման Կուսակցությունների վարկանիշն հետևյալն էր[14].

- «Վրացական երազանք» – 36%,
- «Հանուն փոփոխությունների կոալիցիա» («Ախալի», «Դրոա», «Գիրչի») – 18%,
- «Միասնություն» («Միացյալ ազգային շարժում», «Աղմաշենեբելիի ռազմավարություն», «Եվրոպական Վրաստան») – 14%,
- «Գախարիան՝ Վրաստանի համար» – 10%,
- «Ուժեղ Վրաստան» («Լելոն Վրաստանի համար», «Ժողովրդի համար», «Ազատության հրապարակ» և «Քաղաքացիներ») – 8%:

Այն ժամանակ Սաակաշվիլին անդրադարձել էր այս հարցմանը, նշելով. «*Ոչ մի նկարած ուսումնասիրություն չի կարող փոխել այն փաստը, որ «Երազանքը» իրականում 30%-ից ավելի չունի, իսկ ընդդիմադիր ուժերի մեջ «Միասնություն–ազգային շարժումը» ամուր առաջին տեղում է*»[15]:

Շահարկումները, թե «Հանուն փոփոխությունների կոալիցիան» փոխկապակցված է Սաակաշվիլիի և նրա կուսակցության հետ, իրականում քննարկումների տեղիք է տալիս: Կառույցն ու դրա առաջնորդ Նիկա Գվարամիան Սաակաշվիլիի համակիրներից և թիմակիցներից էր: Վերջինիս պաշտոնավարման տարիներին եղել է Վրաստանի գլխավոր դատախազի տեղակալը, արդարադատության և, ապա, կրթության նախարարը: Գվարամիան 2024-ի սկզբին հայտարարել էր, ՄԱՇ-ն այլևս իր համար անընդունելի է: «*Առաջին անգամ իմ քաղաքական կյանքում ես նրանց համար չեմ քվեարկելու*», – ասել էր Գվարամիան: Նա նաև նշել էր, որ կուսակցության միակ գործոնն

[14] ხვალ რომ არჩევნები ტარდებოდეს, ვის მისცემდით ხმას? | ბრიტანული კომპანია SAVANTA-ს საზოგადოებრივი გამოკითხვა, 11.10.2024, https://mtavari.tv/news/166979-khval-rom-archevnebi-tardebodes-vis-mistsemdit (բեռնման օրը՝ 11.11.2024).

[15] მიხეილ სააკაშვილის სტატუსი, 11.10.2024, https://www.facebook.com/SaakashviliMikheil/posts/pfbid07sXbSqu34UFrAQE6cCFxTphnzyLY7MQeEv9vqJP6RZcyq4WkuAAVtkbMZTnYfBFDl (բեռնման օրը՝ 11.11.2024).

այս պահին Սաակաշվիլին է, բայց թե ինչ է կատարվում նրա հետևում այդ կուսակցությունում, խնդրահարույց է[16]: Ինչ վերաբերում է կոալիցիայի մյուս անդամներից Նիկա Մելիային, ապա նա ժամանակին եղել է ՄԱՇ-ի առաջնորդը, սակայն կառույցն առաջնորդելու համար պայքարում 2023 թ. պարտվել էր Լևան Խաբեիշվիլիին, իսկ վերջինս էլ նրան հեռացրել էր կուսակցության շարքերից: Այնուամենայնիվ, չնայած հայտարարություններին, նախկինում եղած խնդիրներին և հակասություններին, ներկայումս Գվարամիան և իր թիմակիցները համագործակցում են «Միասնություն–ազգային շարժման» հետ, իսկ թե ինչպես կզարգանան նրանց հարաբերությունները հետագայում, դժվար է պատկերացնել:

Վրացական իշխանությունը ընդդիմության բողոքների և հավաքների մասին տարբեր մակարդակներում հայտարարել է, թե ընդդիմությունը բավարար ռեսուրս չունի, և պայքարը երկար չի կարող տևել: Խորհրդարանի խոսնակ Շալվա Պապուաշվիլին էլ ասել էր[17], որ վաղ թե ուշ, ինչպես 2020-ին, ընդդիմությունը կմտնի խորհրդարան և կվերցնի իր աշխատավարձը: Նա նշել էր նաև, որ խորհրդարանը կսկսի իր աշխատանքը 76 ձայնով: Վրաստանի սահմանադրության[18] 38-րդ հոդվածում նշվում է, որ նոր խորհրդարանի առաջին նիստը հրավիրվում է ընտրությունների արդյունքների պաշտոնական հաստատումից 10 օր հետո: Առաջին նիստը հրավիրում է երկրի նախագահը, իսկ օրենսդիր մարմինն իր աշխատանքը սկսում է, եթե նիստին ներկա է լինում պատգամավորների ընդհանուր թվի մեծամասնությունը: Խորհրդարանի լիազորությունները լիարժեք են դառնում անդամների 2/3-ի լիազորությունների ճանաչումից հետո: Այս պարագայում «Վրացական երազանքին» անհրաժեշտ է 100 մանդատ: Իրավաբաններն այս հարցով դեռևս հայտարարություններ չեն արել:

Միջազգային արձագանքն ընտրության արդյունքներին և ներքաղաքական իրավիճակին

Վրաստանի խորհրդարանական ընտրություններին ներգրավված է եղել 529 միջազգային դիտորդ 42 երկրից: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը ներկայացված է եղել 380 փորձագետով՝ երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդներ: Ընտրություններին

[16] Georgia's new alliance leader Nika Gvaramia reveals plans: who will join his team and allies?, 22.02.2024,https://jam-news.net/georgias-new-alliance-leader-nika-gvaramia-reveals-plans-who-will-join-his-team-and-allies/ (բեռնման օրը՝ 26.09.2024).

[17] შალვა პაპუაშვილი - პარლამენტი შეიკრიბება და 76 ხმით 150 დეპუტატის უფლებამოსილებას ცნობს! ოპოზიციონერი დეპუტატები ადრე თუ გვიან პარლამენტში შემოლაგდებიან და ხელფასებსაც აიღებენ!, 28.10.2024, https://www.interpressnews.ge/ka/article/818323-shalva-papuashvili-parlamenti-sheikribeba-da-76-xmit-150-deputatis-uplebamosilebas-cnobs-opozicioneri-deputatebi-adre-tu-gvian-parlamentshi-shemolagdebian-da-xelpasebsac-aigeben/ (բեռնման օրը՝ 11.11.2024).

[18] CONSTITUTION OF GEORGIA, 24.08.1995, https://matsne.gov.ge/en/document/view/30346?publication=36 (բեռնման օրը՝ 11.11.2024).

հետևել են նաև խորհրդարանականներ ԵԱՀԿ ԽՎ-ից, ԵԽԽՎ-ից, ՆԱՏՕ-ի ԽՎ-ից և Եվրախորհրդարանից: Միջազգային բոլոր առաքելություններն իրենց նախնական զեկույցներում անդրադարձել են ընտրությունների՝ լարված մթնոլորտում անցնելուն, ընտրախախտումներին, քվեարկելու գաղտնիության չպահպանման դեպքերին, ինչպես նաև ճնշման և վախի մասին փաստերին և ադմինիստրատիվ ռեսուրսների կիրառմանը, սակայն դիտորդական առաքելություններից և միջազգային կառույցներից ոչ մեկը ընտրությունների լեգիտիմությունը հարցականի տակ չի դրել:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդական առաքելության նախնական զեկույցը[19], ինչպես նաև ԵԽԽՎ-ի եզրակացությունը, համարվում են հեղինակավոր ԵՄ անդամ-պետությունների արտգործնախարարների համար[20]: Զեկույցում համակողմանիորեն ներկայացվել են մինչև ընտրություններն իրավիճակը, կազմակերպչական, իրավական հարցերը, ինչպես նաև հենց ընտրության օրվա առաջին գնահատականները: Նշվում է, որ թեև ընտրություններն, ընդհանուր առմամբ, լավ են կազմակերպված եղել, այնուամենայնիվ, «*նախնական եզրակացության մեջ ընդգծվել են վարչական ռեսուրսների չարաշահման, քարոզարշավի խիստ բևեռացված միջավայրի, մեդիաներկայացուցիչների նկատմամբ բռնության, բևեռացված մեդիա միջավայրի և ընտրողների նկատմամբ համատարած ահաբեկման և հարկադրանքի հետ կապված մտահոգություններ»:* Տեղական և միջազգային դիտորդական կազմակերպությունների բոլոր զեկույցներում շեշտը դրվել է ընտրողների նկատմամբ ճնշումների, գաղտնիության պահպանման խախտման և բռնությունների վրա:

Միջազգային առաջին եզրակացություններից հետո հաջորդել են տարբեր երկրների և կառույցների առաջին արձագանքներն՝ իրականացված ընտրությունների վերաբերյալ: Հետաքրքրական է, որ Վրաստանի արևմտյան գործընկերներն իրենց արձագանքներով մի քանի ճամբարի են բաժանվել՝ նրանք, ովքեր կտրուկ են եղել գնահատականներում և քայլերում և նրանք, ովքեր բարձրաձայնել են խախտումների, լարվածության մասին, սակայն հարաբերությունների վատթարացմանն ուղղված քայլեր չեն արել:

ԱՄՆ

Վրաստանի ռազմավարական գործընկեր ԱՄՆ-ում նույնպես ընտրություններ էին. երկիրն ընտրում էր նախագահ, ում վարած արտաքին քաղաքականությունն էլ հետագայում կարող է հարթեցնել կամ ավելի լարել գործընկերների հետ

[19] Georgia – Parliamentary Elections, 26 October 2024 STATEMENT OF PRELIMINARY FINDINGS AND CONCLUSIONS PRELIMINARY CONCLUSIONS, 26.10.2024 https://www.osce.org/files/f/documents/3/0/579346.pdf (բեռնման օրը՝ 11.11.2024).

[20] Georgia, Parliamentary Elections, 26 October 2024, 26.10.2024, https://www.youtube.com/watch?v=RL1zWuebH3c&t=1s (բեռնման օրը՝ 11.11.2024).

հարաբերությունները: ԱՄՆ-ի Պետքարտուղարության խոսնակ Մեթյու Միլերը հայտարարել էր[21], որ «*Վաշինգտոնը վերջնական գնահատական չունի ընտրությունների արդյունքների վերաբերյալ»,* սակայն չի բացառել հետագա հետևանքները, եթե վրացական կառավարության ուղղությունը չփոխվի: Երկրի նախագահ Ջո Բայդենն էլ կոչ էր արել Վրաստանի կառավարությանը թափանցիկ կերպով հետաքննել բոլոր ընտրական խախտումները և անմիջապես սկսել երկխոսություն քաղաքական բոլոր ուժերի հետ[22]՝ ընդգծելով, որ ԱՄՆ-ն աջակցում է Վրաստանի ինքնիշխանությանը, տարածքային ամբողջականությանը և եվրոատլանտյան ձգտումներին, սակայն մտահոգված է վերջին շրջանում երկրում արձանագրված ժողովրդավարական հետընթացով: Ավելի ուշ Մեթյու Միլերը հայտնել էր նաև, որ Վրաստանում ընտրությունների հետաքննության հարցում ԱՄՆ-ը քննարկումներ է անցկացնում ԵՄ գործընկերների հետ[23]:

Վրաստանի իշխող կուսակցությունում էլ, կարծես թե, ոգևորված են ԱՄՆ-ում Դոնալդ Թրամփի հաղթանակով: Երկրի վարչապետը շնորհավորել էր վճռական հաղթանակի կապակցությամբ՝ հուսալով, որ նախագահ Թրամփի ղեկավարությունը կնպաստի գլոբալ և տարածաշրջանում խաղաղությանը, ինչպես նաև կապահովի Վրաստան–ԱՄՆ հարաբերությունների վերագործարկումը[24]: Խորհրդարանական մեծամասնության առաջնորդ Մամուկա Մդինարաձեն էլ հայտարարել էր, թե «*շատ ուրախ են, որ խաղաղությունն ու ավանդական արժեքները հաղթում են նաև ԱՄՆ-ում*»[25]:

Եվրոպական Միություն

ԵՄ-ից և առանձին անդամ պետություններից արձագանքներն ամենաբազմազանն են:

● Քանի դեռ ԵՄ-ն կամ երկրներն առանձին հետևում էին ընտրությունների ավարտին, Հունգարիայի վարչապետն ընտրատեղամասերի փակումից և առաջին

[21] US joins calls for investigation of reports of election related violations in Georgia, 28.10.2024, https://www.reuters.com/world/us-joins-calls-investigation-reports-election-related-violations-georgia-2024-10-28/ (բեռնման օրը՝ 11.11.2024).

[22] Statement from President Joe Biden on Democratic Backsliding in the Country of Georgia, 29.10.2024, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2024/10/29/statement-from-president-joe-biden-on-democratic-backsliding-in-the-country-of-georgia/ (բեռնման օրը՝ 11.11.2024).

[23] სახ.დეპში ამბობენ, რომ საქართველოში არჩევნების გამოძიების საკითხზე EU-სთან კონსულტაციები აქვთ, 30.10.2024 https://formulanews.ge/News/119401 (բեռնման օրը՝ 11.11.2024).

[24] Congratulations to President Donald Trump on His decisive victory in the election, 06.11.2024, https://x.com/PM_Kobakhidze/status/1854076462778949814?ref_src=twsrc%5Etfw%7Ctwcamp%5Etweetembed%7Ctwterm%5E1854076462778949814%7Ctwgr%5E54a2edd042225976a0e996050984b043fba8c385%7Ctwcon%5Es1_&ref_url=https%3A%2F%2Fagenda.ge%2Fen%2Fnews%2F2024%2F41458 (բեռնման օրը՝ 11.11.2024).

[25] მამუკა მდინარაძე: გვიხარია, რომ აშშ-შიც მშვიდობა და ტრადიციული ფასეულობები იმარჯვებს, 06.11.2024, https://www.radiotavisupleba.ge/a/33189895.html (բեռնման օրը՝ 11.11.2024).

ելքային հարցումների (exit poll-երի) արդյունքներից անմիջապես հետո ջերմորեն շնորհավորել էր Վրաստանի իր գործընկերոջը, որից հետո պարզ էր դարձել, որ հոկտեմբերի 28-ին պաշտոնական այցով ժամանելու է Թբիլիսի: Հունգարիայի վարչապետի այցը լայնորեն քննադատվել է եվրոպական գործընկերների շրջանում, քանի որ երկիրը ներկայումս Եվրամիության խորհրդի նախագահող երկիրն է: ԵՄ 13 երկրի եվրոպական հարցերի նախարարներն Օրբանի այցը Վրաստան վաղաժամ էին որակել՝ ընդգծելով, որ Օրբանը չի խոսում ԵՄ անունից[26], և որ այցն իր պետության անունից է:

● Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի առաջին հայտարարությունում նշված էր, որ ընտրությունները քննարկվելու են Եվրոպական խորհրդի նոյեմբերի նիստին: Նա նշել էր, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ նախնական գնահատականն ընդունում են որպես ի գիտություն և կոչ են անում ԿԸՀ-ին և այլ համապատասխան մարմիններին հետաքննել ընտրական խախտումները և դրանց վերաբերյալ պնդումները: Միշելը նաև կոչ էր արել Վրաստանի ղեկավարությանը՝ ցույց տալ իրենց հավատարմությունը ԵՄ ճանապարհին[27]:

● Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լեյենն էլ հայտարարել էր[28], որ վրաց ժողովուրդն արժանի է ընտրական գործընթացի վերաբերյալ անկախ և թափանցիկ հետաքննության:

● ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելն, իր հերթին, ասել էր, որ Վրաստանում հետընտրական զարգացումները մտահոգիչ են: Նա շեշտել է, որ միջազգային դիտորդները հաղորդել են բռնության մասին ինչպես նախընտրական քարոզարշավի, այնպես էլ ընտրության օրը: «*Նրանք ընտրություններն ազատ և արդար չեն հռչակվել*»[29], – ասված է իր հայտարարությունում: Բորելը կոչ է արել Վրաստանին հետաքննել խախտումները, ճնշումները, ինչպես նաև ցույց տալ իր հավատարմությունը եվրոպական արժեքներին՝ ընտրական գործընթացում լիարժեք թափանցիկությունից սկսած: «*Կարևոր է, որ բողոքի*

---

[26] EU-ის 13 ქვეყნის მინისტრები: მოვითხოვთ საჩივრების მიუკერძოებელ გამოძიებას, 28.10.2024, https://formulanews.ge/News/119285 (բեռնման օրը՝ 11.11.2024).

[27] Following the parliamentary elections in Georgia, I intend to put Georgia on the agenda of the informal #EUCO in Budapest, 27.10.2024, https://x.com/CharlesMichel/status/1850575679248593036 (բեռնման օրը՝11.11.2024).

[28] ურსულა ფონ დერ ლაიენი - ქართველები უნდა იყვნენ საკუთარი ბედის შემოქმედნი, 28.10.2024, https://1tv.ge/news/ursula-fon-der-laieni-bevri-welia-saqartvelos-mosakhleoba-ibrdzvis-demokratiistvis-mat-aqvt-ufleba-nakhon-rom-darghvevebis-gamodzieba-khdeba-swrafad-gamchvirvaled-da-damoukideblad/ (բեռնման օրը՝ 11.11.2024).

[29] Georgia: Statement by the High Representative Josep Borrell on the latest developments following the Parliamentary elections, 29.10.2024, https://www.eeas.europa.eu/eeas/georgia-statement-high-representative-josep-borrell-latest-developments-following-parliamentary_en (բեռնման օրը՝ 11.11.2024).

ակցիաները և դրանց նկատմամբ կառավարության արձագանքը մնան խաղաղ: Երկրում դեմոկրատական հետընթացը պետք է շրջվի և ապահովվի բարենպաստ միջավայր լրատվամիջոցների, քաղաքացիական հասարակության և ընդդիմության համար», – ասել է Բորելը:

● ԵՄ անդամ-պետությունների մի մասի արտաքին հարաբերությունների հանձնաժողովների նախագահները, ինչպես նաև Եվրախորհրդարանի պատգամավորներ համատեղ հայտարարություն են տարածել՝ կոչ անելով միջազգային հետաքննող հանձնաժողով ստեղծել[30]՝ հետաքննելու վրացական ընտրությունների խախտումները և պատժամիջոցներ սահմանել Բիձինա Իվանիշվիլիի և երկրի դեմոկրատական հետընթացի համար պատասխանատու պաշտոնյաների ու քաղաքական առաջնորդների նկատմամբ:

● Ֆրանսիայի նախագահը, Գերմանիայի կանցլերը և Լեհաստանի վարչապետը համատեղ հայտարարություն[31] են տարածել՝ իրենց անհանգստությունը հայտնելով Վրաստանում տիրող քաղաքական իրավիճակի վերաբերյալ և ասել, որ չեն կարող աջակցել Վրաստանի՝ ԵՄ անդամակցության բանակցությունների վերսկսմանը, քանի դեռ երկիրը բարեփոխումներ չի իրականացրել: «*Քանի դեռ Վրաստանը չի փոխել իր ներկայիս գործելաոճը և չի ցուցադրել շոշափելի բարեփոխումների ջանքեր, մասնավորապես, չեղյալ համարելով եվրոպական արժեքներին և սկզբունքներին հակասող վերջին օրենսդրությունը, մենք ի վիճակի չենք լինի աջակցել Վրաստանի հետ անդամակցության բանակցությունների մեկնարկին*», – ասված է հայտարարությունում:

Եվրահանձնաժողովի ընդլայնման զեկույցը Վրաստանի վերաբերյալ

Խորհրդարանական ընտրություններից մի քանի օր անց՝ հոկտեմբերի 30-ին, հրապարակվել է Եվրահանձնաժողովի ԵՄ ընդլայնման վերաբերյալ զեկույցը[32], որում գնահատվում է Վրաստանի ԵՄ անդամակցության պատրաստակամությունը: Զեկույցում ասվում է, որ մարդու հիմնարար իրավունքների վերաբերյալ Հանձնաժողովի անցյալ տարվա հանձնարարականները «*չեն կատարվել*»: Նշվում է, ԵՄ-ի ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության հետ համապատասխանեցման տեմպերը մնում են զգալիորեն ցածր՝ 49% (նախորդ զեկույցում՝ 44%), իսկ 2023 թ. հունիսից Վրաստանը

[30] Joint Statement, ON INTERNATIONAL INQUIRY COMMISSION TO INVESTIGATE IRREGULARITIES OF ELECTIONS IN GEORGIA, 06.11.2024, https://civil.ge/wp-content/uploads/2024/11/Joint_Statement_GEO_6_November_2024.pdf (բեռնման օրը՝ 11.11.2024).

[31] Macron, Scholz, Tusk: concerned over situation in Georgia, 07.11.2024, https://www.reuters.com/world/europe/macron-scholz-tusk-concerned-over-situation-georgia-2024-11-07/ (բեռնման օրը՝ 11.11.2024).

[32] COMMISSION STAFF WORKING DOCUMENT Georgia 2024 Report, 30.10.2024, https://neighbourhood-enlargement.ec.europa.eu/document/download/7b6ed47c-ecde-41a2-99ea-41683dc2d1bd_en?filename=Georgia+Report+2024.pdf&fbclid=IwY2xjawGPKuBleHRuA2FlbQIxMAABHc50VnUc12OI2R1djBbgeZmWGR7sUPU_PZI-U01ofyHFRAmLWX8R2wfANw_aem_MExhq45pHN9M96Z4XZ9bSQ (բեռնման օրը՝ 11.11.2024).

չի մասնակցել ԵՄ ճգնաժամային կառավարման առաքելություններին և անվտանգության ու պաշտպանության քաղաքականության շրջանակներում ընդհանուր գործողություններին: Փաստաթղթի կողմից դիտարկվող ժամանակաշրջանում դեպի ՌԴ ուղիղ չվերթներն ու ուղղությունները զգալիորեն ավելացել են:

Զեկույցում գնահատված են նաև տարբեր ոլորտներ (օրինակ՝ արտաքին հարաբերություններ, արտաքին, անվտանգության և պաշտպանության քաղաքականություն, էներգետիկա, մաքսային միություն, տրանսպորտային քաղաքականություն, արդարադատություն, կրթություն, սննդի անվտանգության, անասնաբուժական և բուսասանիտարական քաղաքականություն և այլն), որոնցից և ոչ մեկը լավ գնահատական չի ստացել: Ոլորտները հիմնականում գնահատվել են «*որոշակի մակարդակի պատրաստություն*» կամ «*չափավոր մակարդակ*», երբեմն՝ պատրաստության «*վաղ փուլ*»: Ըստ էության, Եվրահանձնաժողովը «գնահատել էր» ներկայիս իշխանության աշխատանքը՝ դրանով իսկ ևս մեկ անգամ շեշտելով, որ Վրաստանը հետընթաց է գրանցել: Եվ թեև նախորդ հանձնարարականները «չեն կատարվել», այնուամենայնիվ, **գալիք տարում Վրաստանից ակնկալում են՝**

- *չեղյալ համարել «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքը,*
- *ընդունել ազգային ռազմավարություններ՝ պայքարելու ատելության և խտրականության բոլոր ձևերի դեմ և պաշտպանելու էթնիկ և կրոնական փոքրամասնություններին, ավելի վճռական միջոցներ կիրառել ատելության խոսքի և ատելության հանցագործությունների դեմ պայքարի և կանխարգելման ուղղությամբ,*
- *ուժը կորցրած ճանաչել «Ընտանեկան արժեքների և անչափահասների պաշտպանության մասին» օրենսդրական փաթեթը, հետքննել Tbilisi Pride-ի ժամանակ իրականացված բռնությունն ու դրա կազմակերպիչներին,*
- *տվյալների պաշտպանության իրավական դաշտը համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությանը,*
- *ուժեղացնել/ վերսկսել գենդերային հավասարության հասնելու ջանքերը, մասնավորապես՝ իրավական դաշտը համապատասխանեցնելով Ստամբուլյան կոնվենցիայի շրջանակներին,*
- *խթանել կանանց քաղաքական մասնակցությունը խորհրդարանում:*

Ռուսաստան

Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը հայտնել է, որ Ռուսաստանը պատրաստ է դիտարկել վրացի գործընկերների հետ համագործակցության նոր առաջարկներ[33]: Ավելի ուշ հարցազրույցներից մեկի ժամանակ Լավրովն անդրադարձել է

[33] Россия не будет уходить от контактов с властями Грузии, заявил Лавров, 28.10.2024, https://ria.ru/20241028/lavrov-1980499636.html (բեռնման օրը՝ 11.11.2024).

Վրաստանի խորհրդարանական ընտրություններին ՌԴ ուղիղ և անուղղակի միջամտության մասին խոսակցություններին: «*Վրաստանի ժողովուրդը կատարել է իր ընտրությունը: Մենք հարգանքով ենք վերաբերվում դրան: Մենք պատրաստ ենք շարունակել երկկողմ հարաբերությունների կարգավորման գործընթացը*», – հայտարարել է Ս. Լավրովը՝ միաժամանակ մեղադրելով Արևմուտքին, որ Ռուսաստանին վերագրում են այն, ինչ իրենք են անում: ՌԴ արտգործնախարարը հավելել է նաև, որ արևմտյան երկրներն արհեստականորեն փորձում են Վրաստանի ներկայիս ընտրական գործընթացը ներկայացնել որպես ռազմավարական ընտրություն Ռուսաստանի և Արևմուտքի միջև՝ դրանով իսկ Վրաստանին և հետխորհրդային տարածքի մյուս պետություններին կանգնեցնելով ընտրության առջև[34]:

Միջազգային շնորհավորանքներն իշխող ուժին

«Վրացական երազանքին» հաղթանակի կապակցությամբ շնորհավորանքները շատ չեն. հարևան երկրները՝ ՀՀ, Ադրբեջան, Թուրքիա, Ռուսաստան, ինչպես նաև Իրանը, Չինաստանը, ԱՄԷ-ն, Հունգարիան: Արևմտյան երկրների մեծ մասը կոչ է արել Վրաստանին ցույց տալ իր հավատարմությունը եվրոպական ուղուն, իսկ մի քանիսն էլ հայտարարել են հարաբերությունների վերանայման մասին: Կանադան հայտարարել է Վրաստանի իշխանությունների հետ ընտրությունների խախտումների պատճառով հարաբերությունների վերանայման մասին[35], իսկ Շվեդիան ավելի կտրուկ քայլերի է գնացել՝ դադարեցնելով[36] անմիջական համագործակցությունը Վրաստանի կառավարության հետ՝ միջազգային դիտորդների արձանագրած ընտրական խախտումների պատճառով: Միաժամանակ, Վրաստանի քաղհասարակությանը փոխանցել է 25 մլն շվեդական կրոն (~2.3 մլն ԱՄՆ դոլար): Ուկրաինայից էլ հորդորել են «*Վրաստանի կառավարությանը չգնալ Բելառուսի ճանապարհով*[37]»:

---

[34] Интервью Министра иностранных дел Российской Федерации С. В. Лаврова МИА «Россия сегодня», Москва, 5 ноября 2024 года, 05.11.2024, https://mid.ru/ru/foreign_policy/news/1979380/?fbclid=IwY2xjawGW-t5leHRuA2FlbQIxMAABHbGl71Ve3cVpaiuvmyjNKN_LzpwqTDeIscWzjqxQvKR0rY1AJvjMOLc9og_aem_dQQ8T3dopSVEhWNQsXHP2w (բեռնման օրը՝ 11.11.2024).

[35] Canada plans to review relations with the Georgian government, 29.10.2024, https://www.interpressnews.ge/en/article/134413-canada-plans-to-review-relations-with-the-georgian-government/ (բեռնման օրը՝ 11.11.2024).

[36] The Government Stops Cooperation with Georgia, 28.10.2024, https://swedenherald.com/article/the-government-stops-cooperation-with-georgia?fbclid=IwY2xjawGMzMdleHRuA2FlbQIxMQABHf2xYxQsrmcJWmuMLDPONAdQPgYbY5bvjIrJPcceUoTlazVhnLt6cbl1-Q_aem_ZcDdRxbdBx88hdi_nQc43w (բեռնման օրը՝ 11.11.2024).

[37] «უკრაინის საგარეო საქმეთა სამინისტროს კომენტარი საქართველოში საპარლამენტო არჩევნების შედეგებთან დაკავშირებით», 31.10.2024, https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0VdLWat4yCpxjEwE9EgQJAbvQsMphob4TLQdd5TQMjcNaGgfRCTeFVgQjM1ERHgccl&id=100068681860471&rdid=lfJOpeCPxSmnjGle (բեռնման օրը՝ 11.11.2024).

Ամփոփելով պետք է նշել, որ ի հեճուկս անկայունությունների վերաբերյալ բազմաթիվ կանխատեսումների, Վրաստանում ընտրական գործընթացն անցել է հարաբերականորեն հանդարտ: Թեև բուն ընտրության օրն արձանագրվել են բռնության բազմաթիվ միջադեպեր, լցոնման փաստեր, այնուամենայնիվ, դրանք չեն հանգեցրել հանրային լայնամասշտաբ բողոքի ալիքի: Ինչ վերաբերում է ընդդիմությանը, ապա դեռևս անհասկանալի է մնում, թե ընդդիմությունն ինչպե՞ս և ի՞նչ գործիքակազմով է պատրաստվում պայքարել, այսպես կոչված, «*կեղծված ընտրությունների*» արդյունքների դեմ: Տարբեր ցույցերի, երթերի և ակցիաների ժամանակ փողոց դուրս եկող մարդկանց թիվը զգալի չէ, չնայած հենց կազմակերպիչները պնդում են, թե մարդկանց թիվը կարևոր չէ: Դեռևս վերջնական գնահատական չունի նաև միջազգային հանրությունը, թեև նախնական զեկույցներից և հայտարարություններից նկատելի է, որ Արևմուտքն իր հերթին, Վրաստանն՝ իր, փորձում են ավելի չլարել և հետագա հարաբերությունների համար հնարավորությունների տեղ թողնել:

Հարկ է նշել նաև, որ քիչ իրատեսական է Արևմուտքի և Վրաստանի հարաբերություններում ճգնաժամի հետագա խորացումը և դրա հետևանքով հարաբերությունների սառեցումը: Արևմուտքում շատ լավ հասկանում են Վրաստանի նշանակությունը և ունեցած տարանցիկ դերը Հարավային Կովկասում և տարածաշրջանում: Արևմուտքի հետ հարաբերությունների կարգավորումն էլ, վստահորեն, Վրաստանի համար է առաջնային:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. უცხოური გავლენის გამჭვირვალობის შესახებ, 28.05.2024, https://matsne.gov.ge/ka/document/view/6171895?publication=0

2. United States to Pause Assistance to the Government of Georgia, 31.07.2024, https://www.state.gov/united-states-to-pause-assistance-to-the-government-of-georgia/

3. EU says Georgia's membership path on hold over NGO law, 28.06.2024, https://www.bbc.com/news/articles/cql82we090vo

4. EU Neighbourhood & Enlargement, 08.10.2024, https://x.com/eu_near/status/1843622577115410463

5. პრეზიდენტი: არ ვაღიარებ ამ არჩევნებს, 27.10.2024, https://formulanews.ge/News/119199

6. რა თქმა უნდა, პარლამენტში არ უნდა შევიდეს არავინ!, 27.10.2024, https://www.facebook.com/SaakashviliMikheil/posts/pfbid0gfxhWKWKz9TdbhWiPyud1ZroFNcNtRXGmmAhbUW4BAKVriUPPvdWC3BMYd6WyHtLl?rdid=7HYb40atkC6p8Zd5

7. პროტესტი რუსთაველის გამზირზე | მთავარის საგანგებო ეთერი, 04.11.2024, https://www.facebook.com/TvMtavari/videos/1246678829706225

8. Levan Gogichaishvili: I don't understand the passions, what does it matter if Gakharia goes to the opposition headquarters or not, Gakharia doesn't go, someone else goes, he can't be everywhere - as for the statements of the "dream" leaders, they are clowns and should be left alone, 08.11.2024,

https://www.interpressnews.ge/en/article/134715-levan-gogichaishvili-i-dont-understand-the-passions-what-does-it-matter-if-gakharia-goes-to-the-opposition-headquarters-or-not-gakharia-doesnt-go-someone-else-goes-he-cant-be-everywhere-as-for-the-statements-of-the-dream-leaders-they-are-clowns-and-should-be-left-alone/

9. Teona Aqubardia: we were involved in the actions, a peaceful demonstration is the right of every citizen - we participate, although we are not the organizers, 08.11.2024, https://www.interpressnews.ge/en/article/134739-teona-aqubardia-we-were-involved-in-the-actions-a-peaceful-demonstration-is-the-right-of-every-citizen-we-participate-although-we-are-not-the-organizers/

10. ახალგაზრდებთან, 10.11.2024, https://www.facebook.com/photo/?fbid=1087827719467314&set=a.246154943634600

11. ხვალ რომ არჩევნები ტარდებოდეს, ვის მისცემდით ხმას? | ბრიტანული კომპანია SAVANTA-ს საზოგადოებრივი გამოკითხვა, 11.10.2024, https://mtavari.tv/news/166979-khval-rom-archevnebi-tardebodes-vis-mistsemdit

12. მიხეილ სააკაშვილის სტატუსი, 11.10.2024, https://www.facebook.com/SaakashviliMikheil/posts/pfbid07sXbSqu34UFrAQE6cCFxTphnzyLY7MQeEv9vqJP6RZcyq4WkuAAVtkbMZTnYfBFDI

13. Georgia's new alliance leader Nika Gvaramia reveals plans: who will join his team and allies?, 22.02.2024,https://jam-news.net/georgias-new-alliance-leader-nika-gvaramia-reveals-plans-who-will-join-his-team-and-allies/

14. შალვა პაპუაშვილი - პარლამენტი შეიკრიბება და 76 ხმით 150 დეპუტატის უფლებამოსილებას ცნობს! ოპოზიციონერი დეპუტატები ადრე თუ გვიან პარლამენტში შემოლაგდებიან და ხელფასებსაც აიღებენ!, 28.10.2024, https://www.interpressnews.ge/ka/article/818323-shalva-papuashvili-parlamenti-sheikribeba-da-76-xmit-150-deputatis-uplebamosilebas-cnobs-opozicioneri-deputatebi-adre-tu-gvian-parlamentshi-shemolagdebian-da-xelpasebsac-aigeben/

15. CONSTITUTION OF GEORGIA, 24.08.1995, https://matsne.gov.ge/en/document/view/30346?publication=36

16. Georgia – Parliamentary Elections, 26 October 2024 STATEMENT OF PRELIMINARY FINDINGS AND CONCLUSIONS PRELIMINARY CONCLUSIONS, 26.10.2024 https://www.osce.org/files/f/documents/3/0/579346.pdf

17. Georgia, Parliamentary Elections, 26 October 2024, 26.10.2024, https://www.youtube.com/watch?v=RL1zWuebH3c&t=1s

18. US joins calls for investigation of reports of election related violations in Georgia, 28.10.2024, https://www.reuters.com/world/us-joins-calls-investigation-reports-election-related-violations-georgia-2024-10-28/

19. Statement from President Joe Biden on Democratic Backsliding in the Country of Georgia, 29.10.2024, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2024/10/29/statement-from-president-joe-biden-on-democratic-backsliding-in-the-country-of-georgia/

20. სახ.დეპში ამბობენ, რომ საქართველოში არჩევნების გამოძიების საკითხზე EU-სთან კონსულტაციები აქვთ, 30.10.2024, https://formulanews.ge/News/119401

21. Congratulations to President DonaldTrump on His decisive victory in the election, 06.11.2024, https://x.com/PM_Kobakhidze/status/1854076462778949814?ref_src=twsrc%5Etfw%7Ctwcamp%5Etweetembed%7Ctwterm%5E1854076462778949814%7Ctwgr%5E54a2edd042225976a0e996050984b043fba8c385%7Ctwcon%5Es1_&ref_url=https%3A%2F%2Fagenda.ge%2Fen%2Fnews%2F2024%2F41458

22.[1] მამუკა მდინარაძე: გვიხარია, რომ აშშ-შიც მშვიდობა და ტრადიციული ფასეულობები იმარჯვებს, 06.11.2024, https://www.radiotavisupleba.ge/a/33189895.html

23. EU-ის 13 ქვეყნის მინისტრები: მოვითხოვთ საჩივრების მიუკერძოებელ გამოძიებას, 28.10.2024, https://formulanews.ge/News/119285

24. Following the parliamentary elections in Georgia, I intend to put Georgia on the agenda of the informal #EUCO in Budapest, 27.10.2024, https://x.com/CharlesMichel/status/1850575679248593036

25. ურსულა ფონ დერ ლაიენი - ქართველები უნდა იყვნენ საკუთარი ბედის შემოქმედნი, 28.10.2024, https://1tv.ge/news/ursula-fon-der-laieni-bevri-welia-saqartvelos-mosakhleoba-ibrdzvis-demokratiistvis-mat-aqvt-ufleba-nakhon-rom-darghvevebis-gamodzieba-khdeba-swrafad-gamchvirvaled-da-damoukideblad/

26. Georgia: Statement by the High Representative Josep Borrell on the latest developments following the Parliamentary elections, 29.10.2024, https://www.eeas.europa.eu/eeas /georgia-statement-high-representative-josep-borrell-latest-developments-following-parliamentary_en

27. Joint Statement, ON INTERNATIONAL INQUIRY COMMISSION TO INVESTIGATE IRREGULARITIES OF ELECTIONS IN GEORGIA, 06.11.2024, https://civil.ge/wp-content/uploads/2024/11/Joint_Statement_GEO_6_November_2024.pdf

28. Macron, Scholz, Tusk: concerned over situation in Georgia, 07.11.2024, https://www.reuters.com/world/europe/macron-scholz-tusk-concerned-over-situation-georgia-2024-11-07/

29. COMMISSION STAFF WORKING DOCUMENT Georgia 2024 Report, 30.10.2024, https://neighbourhood-enlargement.ec.europa.eu/document/download/7b6ed47c-ecde-41a2-99ea-41683dc2d1bd_en?filename=Georgia+Report+2024.pdf&fbclid=IwY2xjawGPKuBleHRuA2FlbQIxMAABHc50VnUc12Ol2R1djBbgeZmWGR7sUPU_PZI-U01ofyHFRAmLWX8R2wfANw_aem_MExhq45pHN9M96Z4XZ9bSQ

30. Россия не будет уходить от контактов с властями Грузии, заявил Лавров, 28.10.2024, https://ria.ru/20241028/lavrov-1980499636.html

31. Интервью Министра иностранных дел Российской Федерации С.В.Лаврова МИА «Россия сегодня», Москва, 5 ноября 2024 года, 05.11.2024, https://mid.ru/ru/foreign_policy/news/1979380/?fbclid=IwY2xjawGW-t5leHRuA2FlbQIxMAABHbGl71Ve3cVpaiuvmyjNKN_LzpwqTDelscWzjqxQvKR0rY1AJvjMOLc9og_aem_dQQ8T3dopSVEhWNQsXHP2w

32.Canada plans to review relations with the Georgian government, 29.10.2024, https://www.interpressnews.ge/en/article/134413-canada-plans-to-review-relations-with-the-georgian-government/

33. The Government Stops Cooperation with Georgia, 28.10.2024, https://swedenherald.com/article/the-government-stops-cooperation-with-georgia?fbclid=IwY2xjawGMzMdleHRuA2FlbQIxMQABHf2xYxQsrmcJWmuMLDPONAdQPgYbY5bvjIrJPcceUoTlazVhnLt6cbl1Q_aem_ZcDdRxbdBx88hdi_nQc43w

34. «უკრაინის საგარეო საქმეთა სამინისტროს კომენტარი საქართველოში საპარლამენტო არჩევნების შედეგებთან დაკავშირებით», 31.10.2024, https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0VdLWat4yCpxjEwE9EgQJAbvQsMphob4TLQdd5TQMjcNaGgfRCTeFVgQjM1ERHgccl&id=100068681860471&rdid=IfJOpeCPxSmnjGJe